


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. հուլիսին /վերլուծություն/


2003թ. հուլիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 6769 գործարքներ, որոնք 2002թ. հուլիսի համեմատ աճել են 31.7%-ով, իսկ 2003թ հունիս համեմատ՝ 14.2%-ով:

2003թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների



ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2003թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2934 օտարման գործարքների 91.3%-ը կազմել են առուվաճառքները, 8.3%-ը՝ նվիրատվությունները և 0.3%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 50.3%-ն արձանագրվել են Երևան քաղաքում, իսկ 55.1%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. հուլիսին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 29.7%-ով, իսկ 2003թ. հունիսի համեմատ՝ 17.5%-ով: 2003թ. հուլիսին Երևան քաղաքում անշարժ գույքի 1297 առուվաճառքի գործարքների 74.6%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2003թ. հունիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 20.0%-ով, իսկ 2002թ. հուլիսի համեմատ՝ 4.9%-ով:

2003թ. հուլիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

/1 ԱՄՆ դոլարը 2003թ. հուլիսին համարժեք է 579.5 դրամի/

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. հուլիսին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		հուլիս 2003թ.	հունիս 2003թ.	հուլիս 2002թ.
Կենտրոն	200.0-970.0	388.3	387.3	273.0
Արաբկիր	150.0-550.0	284.3	274.7	172.0
Քանաքեռ-Զեյթուն	100.0-330.0	177.3	172.0	104.0
Նոր-Նորք	90.0-240.0	133.4	130.1	99.0
Ավան	90.0-190.0	132.1	127.6	88.0
Էրեբունի	80.0-300.0	146.3	143.8	93.0
Շենգավիթ	80.0-250.0	145.2	137.0	99.0
Դավթաշեն	100.0-250.0	171.3	163.6	104.0
Աջափնյակ	80.0-220.0	146.1	138.7	93.0
Մալաթիա-Սեբաստիա	90.0-240.0	144.2	139.6	92.0
Նուբարաշեն	40.0-100.0	66.1	65.8	48.0
Երևան	40.0-970.0	175.9	170.9	115.0

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. հուլիսին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, հունիսի համեմատ աճել են 2.9%-ով, իսկ 2002թ. հուլիսի համեմատ՝ 53.0%-ով:

2003թ. հուլիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 452 բնակարաններ, որոնց քանակը հունիսի համեմատ աճել է 23.5%-ով, իսկ 2002թ. հուլիսի համեմատ՝ 28.4%-ով:

2003թ. հուլիսին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. հուլիսին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			հուլիս 2003թ.	հունիս 2003թ.	հուլիս 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.4	62.3	57.1
	Ապարան	18.0-38.0	27.2	27.2	25.6
	Թային	18.0-38.0	25.0	25.0	21.5
Արարատ	Արտաշատ	22.0-85.0	54.4	54.3	52.2
	Մասիս	20.0-85.0	54.4	54.4	49.1
	Վեդի	20.0-45.0	31.6	31.5	28.9
	Արարատ	22.0-40.0	31.5	31.5	27.5
Արմավիր	Վաղարշապատ	35.0-105.0	84.1	84.0	71.8
	Արմավիր	21.0-80.0	45.5	45.5	41.8
	Մեծամոր	17.0-50.0	30.7	30.6	28.5
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.5	30.5	29.6
	Գավառ	20.0-45.0	30.2	30.2	29.2
	Մարտունի	18.0-45.0	29.5	29.5	28.0
	Վարդենիս	12.0-25.0	17.1	17.0	16.3
Լոռի	Վանաձոր	30.0-95.0	60.8	60.8	56.9
	Ստեփանավան	20.0-55.0	33.2	33.1	28.6
	Սյիտակ	17.0-43.0	23.8	23.8	22.0
	Այվերդի	17.0-45.0	25.4	25.4	22.6
	Տաշիր	15.0-26.0	19.3	19.3	18.0
Կոտայք	Աբովյան	40.0-100.0	83.8	83.5	76.5
	Նոր Հաճն	35.0-75.0	52.0	51.8	50.2
	Բյուրեղավան	17.0-50.0	35.2	35.2	32.2
	Եղվարդ	28.0-55.0	40.3	40.3	36.4
	Հրազդան	18.0-65.0	30.7	30.6	27.9
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.7	75.3	71.9
	Չարենցավան	13.0-55.0	31.0	30.9	27.9
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	71.6	71.6	60.9
	Արթիկ	17.0-45.0	25.2	25.2	22.8
	Մարալիկ	15.0-45.0	23.6	23.5	20.5
Սյունիք	Գորիս	21.0-45.0	29.6	29.6	26.6
	Կապան	18.0-55.0	29.0	28.9	25.4
	Սիսիան	17.0-57.0	27.5	27.5	24.4
	Մեղրի	17.0-50.0	25.1	25.0	21.3
	Քաջարան	18.0-38.0	18.4	18.3	15.9
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	35.2	35.2	31.0
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.8	46.8	44.5
	Զերմուկ	20.0-65.0	41.1	41.0	37.7
Տավուշ	Դիլիջան	15.0-65.0	36.1	36.1	31.5

Իջևան	23.0-50.0	40.3	40.3	38.3
Բերդ	15.0-45.0	29.2	29.1	26.9
Նոյեմբերյան	15.0-45.0	26.7	26.6	24.5

2003թ. հուլիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները հունիսի համեմատ աճել են 0.2%-ով, իսկ 2002թ. հուլիսի համեմատ՝ 9.8%-ով:

2003թ. հուլիսին մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 376 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 93, մյուս մարզերում միասին վերցրած՝ 283, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 25.8%-ով, այդ թվում Երևան քաղաքում նվազել է 7.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 42.9%-ով: 2003թ. հունիսի համեմատ, առանձնատների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 12.9%-ով, ընդ որում մյուս մարզերում միասին վերցրած՝ 22.0%-ով, իսկ Երևանում 7.9%-ով նվազել է:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. հուլիսին անհատական բնակելի տների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003 թ. հուլիսին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		հուլիս 2003թ.	հունիս 2003թ.	հուլիս 2002թ.
Կենտրոն	200.0-990.0	391.0	390.0	283.0
Արաբկիր	160.0-580.0	286.0	277.0	175.0
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	178.4	174.0	110.0
Նորք-Մարաշ	180.0-640.0	294.0	292.0	222.0
Ավան	95.0-200.0	133.0	129.0	95.0
Էրեբունի	95.0-320.0	147.0	145.0	103.0
Շենգավիթ	85.0-260.0	146.0	138.0	102.0
Դավթաշեն	100.0-260.0	172.0	165.0	106.0
Աջափնյակ	85.0-230.0	147.0	140.0	97.0
Սալաթիա-Մերաստիա	95.0-250.0	145.0	141.0	98.0
Նուբարաշեն	45.0-110.0	70.0	68.0	49.0
Միջինը Երևանում	45.0-990.0	<b>191.8</b>	<b>187.2</b>	<b>130.9</b>

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. հուլիսին առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները հունիսի համեմատ աճել են 2.5%-ով, իսկ 2002թ. հուլիսի համեմատ՝ 46.5%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			հուլիս 2003թ.	հունիս 2003թ.	հուլիս 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	82.5	82.4	77.2
	Ապարան	20.0-55.0	38.8	38.7	34.9
	Թալին	15.0-40.0	28.1	28.1	23.5
Արարատ	Արտաշատ	28.0-85.0	61.6	61.6	57.0
	Մասիս	27.0-88.0	62.4	62.4	58.9
	Վեդի	25.0-60.0	36.3	36.2	34.5
	Արարատ	25.0-60.0	37.4	37.3	34.5
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	89.3	89.0	75.5
	Արմավիր	35.0-90.0	52.2	52.1	47.5
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	36.4	36.3	33.9
	Գավառ	25.0-65.0	39.8	39.8	37.2
	Մարտունի	20.0-55.0	33.7	33.7	31.7
	Վարդենիս	15.0-45.0	21.2	21.1	19.0
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	68.3	68.1	63.9
	Ստեփանավան	20.0-50.0	33.5	33.3	31.8
	Սպիտակ	17.0-50.0	24.1	24.1	22.2
	Ալավերդի	18.0-50.0	25.8	25.7	23.7
	Տաշիր	15.0-30.0	19.8	19.8	18.5
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	92.2	92.2	86.9
	Նոր Հաճն	35.0-80.0	54.2	54.2	50.8
	Բյուրեղավան	15.0-50.0	38.1	38.1	33.3
	Եղվարդ	23.0-70.0	47.1	47.1	42.9
	Հրազդան	25.0-65.0	39.8	39.8	36.9
	Ծաղկաձոր	45.0-110.0	84.9	84.8	83.2
	Չարենցավան	25.0-50.0	33.3	33.3	31.6
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	90.6	90.4	85.4
	Արթիկ	18.0-55.0	28.6	28.5	24.9
	Մարալիկ	15.0-45.0	23.9	23.9	22.0
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.5	31.4	27.5
	Կապան	25.0-55.0	30.9	30.9	27.8
	Միսիան	18.0-50.0	28.5	28.4	25.3
	Մեղրի	18.0-40.0	28.1	28.1	23.4
	Քաջարան	15.0-30.0	19.2	19.2	16.5
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.9	36.9	33.4
	Եղեգնաձոր	20.0-65.0	49.1	49.0	46.5
	Ջերմուկ	25.0-60.0	43.2	43.0	38.9
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.1	39.1	36.2

	<b>Իջևան</b>	30.0-70.0	41.1	41.0	39.5
	<b>Բերդ</b>	20.0-50.0	30.8	30.7	27.9
	<b>Նոյեմբերյան</b>	20.0-50.0	30.7	30.6	27.5

2003թ. հուլիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները հունիսի համեմատ աճել են 0.2%-ով, իսկ 2002թ. հուլիսի համեմատ՝ 8.7%-ով:

2003թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են հողերի օտարման 541 գործարքներ /322.02 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում Երևան քաղաքում՝ 23.58 հա/: Հողերի օտարման 222 գործարքներն /278.31 հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 531-ը հանդիսացել են առուվաճառքի, 6-ը՝ նվիրատվության և 4-ը՝ փոխանակման գործարքներ: Հողերի առուվաճառքի 39 գործարքներում որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձինք:

2003թ. հուլիսին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքների քանակն աճել է 2.2 անգամ, իսկ 2003թ. հունիսի համեմատ՝ աճել 17.2%-ով: 2003թ. հուլիսին պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ առուվաճառքից 121-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 15-ը՝ /1.15 հա/ Երևանում, իսկ 106-ը՝ /159.64 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 27 միավորը /151.05 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական, 89-ը՝ /9.30 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 5-ը՝ /0.44 հա/ հասարակական կառուցապատման:

Ստորև ներկայացվել է 2003թ. հուլիսին մարզերում հողերի նկատմամբ գրանցված առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒ ԻՍԸ	<i>Չետական սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	20	1.51	27	15.82	0	0.00	36	2.37	13	1.13
Արագածոտն	0	0.00	3	0.36	0	0.00	25	11.67	5	0.52	0	0.00
Արարատ	0	0.00	1	0.11	3	0.07	64	19.73	31	2.66	1	0.02
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	35	31.98	16	1.28	0	0.00
Գեղարքունիք	21	147.80	1	1.00	0	0.00	2	0.64	2	0.08	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	9	10.02	1	0.15	1	0.42
Կոտայք	6	3.25	74	7.12	0	0.00	34	11.41	57	5.31	1	0.19
Շիրակ	0	0.00	0	0.00	1	0.14	19	35.99	10	0.32	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	6	5.73	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.09	1	0.15	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>27</b>	<b>151.05</b>	<b>99</b>	<b>10.10</b>	<b>31</b>	<b>16.03</b>	<b>195</b>	<b>127.26</b>	<b>159</b>	<b>12.84</b>	<b>16</b>	<b>1.76</b>

2003թ. հուլիսին Երևանում վաճառվել են 4 միավոր /2.31 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր:

2003թ. հուլիսին, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 222 գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 27 և դատարանի վճռով 3 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						24	8.59	840.0	7600.0	2315.0
Ապարան								130.0	500.0	290.0
Թային						1	3.08	200.0	1680.0	355.0
Ծաղկահովիտ								170.0	2100.0	300.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						35	9.69	1040.0	6060.0	2010.0
Մասիս						12	2.87	400.0	3100.0	1040.0
Վեդի						14	6.54	680.0	7200.0	1185.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						12	9.97	650.0	4650.0	1225.0
Բաղրամյան						9	12.34	130.0	1000.0	410.0
Վաղարշապատ						14	9.68	980.0	11150.0	2175.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						2	0.64	420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	475.0
Սևան								100.0	1000.0	406.0
Վարդենիս	21	147.80	362.0	364.0	363.0			60.0	1180.0	230.0
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի								360.0	5500.0	850.0
Գուգարք								500.0	6000.0	1250.0
Սպիտակ								500.0	3300.0	1060.0
Ստեփանավան								180.0	4000.0	320.0
Տաշիր						9	10.02	100.0	400.0	240.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	4	2.78	292.0	1235.0	543.0	17	5.09	520.0	10100.0	4240.0
Եղվարդ						13	5.12	380.0	6100.0	2395.0
Հրազդան	2	0.46	880.0	880.0	880.0	4	1.21	250.0	4000.0	805.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						8	6.11	550.0	760.0	640.0
Ամասիա						8	20.05	80.0	525.0	190.0
Անի						3	9.84	240.0	800.0	295.0
Աշոցք								60.0	210.0	130.0
Արթիկ								140.0	800.0	260.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								200.0	1600.0	408.0
Կապան						1	1.76	120.0	2000.0	330.0
Մեղրի								400.0	4240.0	900.0
Սիսիան						5	3.97	90.0	1500.0	300.0
<b>Վայոց Ձորի մարզ</b>										

Եղեգնաձոր								260.0	4000.0	1060.0
Վայք						1	0.09	120.0	3400.0	380.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	2000.0	460.0
Իջևան								530.0	4000.0	1050.0
Նոյեմբերյան								100.0	8340.0	700.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2003թ. հուլիսին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 202 առուվաճառքի գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 79, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	3600.0	64.0	64.0	64.0	5	5150.0	120.0	3800.0	2250.0
Ապարան								120.0	670.0	310.0
Թալին								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1100.0	88.0	88.0	88.0	3	3430.0	175.0	2460.0	650.0
Մասիս						23	17760.0	270.0	3680.0	815.0
Վեդի						5	5450.0	115.0	1000.0	495.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						3	2560.0	180.0	2440.0	685.0
Բաղրամյան								120.0	280.0	200.0
Վաղարշապատ						13	10232.0	280.0	3700.0	1290.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	600.0	180.0	1000.0	520.0
Ճամբարակ	1	10000.0	112.0	112.0	112.0			78.0	180.0	140.0
Մարտունի						1	245.0	120.0	320.0	225.0
Սևան								120.0	1000.0	225.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի								78.0	440.0	200.0
Գուգարք								78.0	3800.0	630.0
Սպիտակ						1	1530.0	78.0	450.0	160.0
Ստեփանավան								78.0	340.0	145.0
Տաշիր								78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	14	11200.0	95.0	124.0	120.0	34	29133.0	180.0	4300.0	1480.0
Եղվարդ	60	60000.0	86.0	86.0	86.0	21	22309.0	180.0	3670.0	1960.0
Հրազդան						2	1610.0	180.0	4120.0	1320.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						10	3186.3	120.0	2500.0	400.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի								120.0	430.0	190.0



Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Սյունիքի մարզ										
Գորիս								78.0	670.0	385.0
Կապան								78.0	1000.0	410.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Սիսիան								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	1500.0	78.0	990.0	300.0
Վայք								78.0	1000.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Իջևան								78.0	1600.0	440.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0

Պետք է նշել, որ 2003թ. հուլիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 13 գործարքներ՝ 12.32 հա մակերեսով / 0.10 հա բնակելի կառուցապատման /տնամերձ/, 12.22 հա գյուղատնտեսական նշանակության/: Ընդ որում 2 գործարքներ են գրանցվել Երևանում /0.10 հա/, 4-ը՝ Արարատի /1.93 հա/, 2-ը՝ Արմավիրի /2.0 հա/, 1-ը՝ Գեղարքունիքի /0.88 հա/, 2-ը՝ Շիրակի /7.01 հա/ և 2-ը՝ Սյունիքի /0.40 հա/ մարզերում:

2003թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 563 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.3%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 36.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2002թ. հուլիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 0.7%-ով, իսկ 2003թ. հունիսի համեմատ նվազել է 14.2%-ով:

2003թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 48 բնակարանների, 9 բնակելի տների, 186 հասարակական, 11 արտադրական նշանակության օբյեկտների և 309 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. հուլիսին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 61 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. հուլիսի համեմատ, նվազել են 18.7%-ով անգամ, իսկ 2003թ. հունիսի համեմատ 62.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. հուլիսին հանրապետությունում վարձակալվել են 2637.46 հա ընդհանուր մակերեսով հողեր /11.83հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 2005.06 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 611.54 հա բնակավայրերի, 9.03 հա արդյունաբերական օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արմավիրի մարզում՝ 1453.05 հա, որից 849.16 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ Տավուշի մարզում 1.79 հա, որից 1.69 հա գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 512.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. հուլիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i>	<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i>
------------------------	---	--

	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	10	141.75
Արարատ	0	0.00	41	141.67
Արմավիր	0	0.00	10	849.16
Գեղարքունիք	4	173.00	13	115.11
Լոռի	5	139.00	2	18.30
Կոտայք	2	200.00	29	58.97
Շիրակ	0	0.00	15	115.40
Սյունիք	0	0.00	6	49.21
Վայոց Ձոր	0	0.00	1	1.80
Տավուշ	0	0.00	1	1.69
<b>Ընդամենը</b>	<b>11</b>	<b>512.00</b>	<b>128</b>	<b>1493.06</b>

2003թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 385 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.7%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2003թ. հունիսի համեմատ, աճել է 1.0%-ով, իսկ 2002թ. հուլիսի համեմատ՝ 68.9%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 43.6%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /24.7%/, առանձնատների /16.9%/ և հողերի /7.5%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 226 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2002թ. հուլիսի համեմատ, աճել է 61.4%-ով, իսկ 2003թ. հունիսի համեմատ՝ 6.1%-ով:

2003թ. հուլիսին հանրապետությունում գրավադրվել են 22.61 հա /0.68հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 21.89 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 15.92 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ Կոտայքի մարզում՝ 0.03 հա բնակավայրերի հողեր:

2003թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/, համապատասխանաբար, 15 և 7 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3 %:

2003թ. հունիսի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 46.7%-ով, իսկ 2002թ. հուլիսի համեմատ նվազել է՝ 77.8%-ով: 2003թ. հուլիսին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 36.4% :

2003թ. հուլիսին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 967 գործարքներ, որոնց քանակը 2003թ. հունիսի համեմատ աճել է 21.2%-ով, իսկ 2002թ. հուլիսի համեմատ՝ 54.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.3%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /53.9%/:

## ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն